# ԼԻԶԻՆԳՈՎ ԱՊՐԱՆՔԻ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
# N ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-3

ք. Երևան «27» 11 2025թ.

<<Նորք-Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ-ն, ի դեմս տնօրեն Մ. Աղամյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Լիզինգառու», մի կողմից, <<Փոլարիս>> ՍՊԸ, ի դեմս տնօրեն Շարիս Աքբարի Մասիհի Շաhիկիի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, և <<ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ>> վարկային կազմակերպություն>> ՓԲԸ-ն, ի դեմս գլխավոր տնօրեն Ա. Գասպարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ-լիզինգատու» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. **Վաճառողը** պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով **Լիզինգառուին** հանձնել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը, եթե այն համապատասխանում է Պայմանագրով սահմանված բնութագրին, (այսուհետ՝նաև ապրանք), **Լիզինգառուն** պարտավորվում է ընդունել ապրանքը, իսկ Գնորդ-Լիզինգատուն պարտավորվում է վճարել դրա համար **Վաճառողին**:

## 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Լիզինգառուն և/կամ Գնորդ-լիզինգատուն իրավունք ունեն՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում **Վաճառողի** կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել **Վաճառողից** վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 **Վաճառողի** կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել **Վաճառողից** վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 **Վաճառողից** պահանջել հատուցելու վնասները, եթե **Գնորդ-լիզինգատուն Վաճառողի** կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Գնորդ/Լիզինգատուի նախնական գրավոր համաձայնությամբ լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 **Վաճառողի** կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել **Լիզինգառուի** համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 10 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել **Վաճառողին**:

2.2 Լիզինգառուն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 **Վաճառողի** հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել **Վաճառողին**:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում վճարել լիզինգի պայմանագրով վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ այդ պայմանագրով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին **Վաճառողին** ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.4.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո **Վաճառողին** հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

**2.3 Գնորդ-լիզինգատուն պարտավոր է՝**

2.3.1 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով **Վաճառողին** վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Վաճառողն իրավունք ունի՝**

2.4.1 Լիազինգառուից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.4.2 **Գնորդ-լիզինգատու**ից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և **Լիզինգառուի** կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.4.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե **Գնորդ-լիզինգատուն** էականորեն խախտել է պայմանագիրը:

2.4.3.1 **Գնորդ-լիզինգատու**ի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.4.4 Լիզինգառուի և Գնորդ-լիզինգատուի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

**2.5 Վաճառողը պարտավոր է՝**

2.5.1 **Լիզինգառուին** հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.5.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան **Լիզինգառուի** և/կամ **Գնորդ-լիզինգատուի** կողմից սահմանված ժամկետներում:

2.5.3 **Լիզինգառուին** հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.5.4 **Լիզինգառուին** հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ **Լիզինգառուի** պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.5.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.5.6 Հետ տանել **Լիզինգառուի** կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ **Վաճառողին** վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.5.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.5.8 **Լիզինգառուին** հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.5.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո **թե՛ Գնորդ-լիզինգատուին**, թե՛ **Լիզինգառուին** հատուցել վերջիններիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.5.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել թե՛ **Գնորդ-լիզինգատուին**, թե՛ **Լիզինգառուին** :

## 3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 53 970 000 (հիսուներեք միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ:

Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով **Վաճառողի** կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները, ակնկալվող շահույթը, ինչպես նաև լիզինգի սպասարկման գինը և Լիզինգի առարկան սեփականության իրավունքով **Լիզինգառուին** հանձնելու գինը, ընդ որում.

| Չափա-բաժինների համարները | Ապրանքի անվանումը | Ընդհանուր գինը ՀՀ դրամով /տառերով և թվերով/ |
|---|---|---|
| *1* | *2* | *5=3+4* |
| 4 | Լիզինգով ԷՍԳ սարքի ձեռքբերում | 12 115 000 |

| | | |
|---|---|---|
| | | տասներկու միլիոն մեկ հարյուր տասնհինգ հազար |
| | Լիզինգի առարկայի գինը | 9 850 000<br>ինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար |
| | Լիզինգի սպասարկման գինը | 2 200 000<br>երկու միլիոն երկու հարյուր հազար |
| | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 60 000<br>վաթսուն հազար |
| | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5 000<br>Հինգ հազար |
| 5 | **Լիզինգով Դեղորայքի ներարկման համակարգի ձեռքբերում՝ իր բաղկացուցիչ մասերով** | 41 855 000<br>քառասունմեկ միլիոն ութ հարյուր հիսունհինգ հազար |
| | Լիզինգի առարկայի գինը | 33 550 000<br>/երեսուներեք միլիոն հինգ հարյուր հիսուն հազար |
| | Լիզինգի սպասարկման գինը | 8 000 000<br>ութ միլիոն |
| | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 300 000<br>երեք հարյուր հազար |
| | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5 000<br>Հինգ հազար |

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և **Վաճառողն** իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ **Լիզինգառուն** կամ **Գնորդ-լիզինգատուն** նվազեցնելու այդ գինը:

3.2 **Գնորդ-լիզինգատուն** մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները **Վաճառողի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա 10 աշխատանքային օրվա ընթացքում բանկային փոխանցման միջոցով:

3.3 **Լիզինգառուն** իրեն հանձնված ապրանքի ժամանակավոր օգտագործման և տիրապետման դիմաց **Գնորդ-լիզինգատուին** վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները **Գնորդ-լիզինգատուի** հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով՝ համաձայն միմյանց միջև կնքվելիք **լիզինգի պայմանգրի անբաժանելի մաս հանդիսացող վճարման ժամանակացույցի:**

## 4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 **Վաճառողը** երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

4.2 Հիմնական միջոց հանդիսացող ապրանքների համար երաշխիքային ժամկետ է սահմանվում **Լիզինգառուի** կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված 365 օրացուցային օրը: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել մատակարարված ապրանքի թերություններ, ապա **Վաճառողը** պարտավոր է իր հաշվին, **Լիզինգառուի** կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

## 5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է **Լիզինգառուի** և **Վաճառողի** միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը **Լիզինգառուին** հանձնելու փաստը ֆիքսվում է **Լիզինգառուի** և **Վաճառողի** միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ապրանքի հանձնման-ընդունման ակտի կնքման պահից ապրանքը համարվում է **Գնորդ-լիզինգատուի** կողմից **Լիզինգառուի** ժամանակավոր օգտագործմանը և տիրապետմանը հանձնված:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ **Վաճառողը** **Լիզինգառուին** է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը **Լիզինգառուին** հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում **Վաճառողը** հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, **Լիզինգառուն** պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10

աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով **Վաճառողին** է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա **Լիզինգառուն** չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով **Վաճառողին** հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում **Լիզինգառուն** ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և **Վաճառողի** նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում **Լիզինգառուն** չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը **Լիզինգառուն** էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով **Վաճառողին** է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 **Վաճառողը** պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 **Վաճառողի** կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում **Վաճառողից** յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում **Վաճառողից** գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով:[21] Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև. ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են **Վաճառողին** վճարման ենթակա գումարների հետ:

6.5 **Գնորդ-լիզինգատուի** կողմից պայմանագրի 3.2 կետով նախատեսված ժամկետի խախտման համար **Գնորդ-լիզինգատուի** նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

Սույն գլխի դրույթները կիրառման ենթակա չեն **Լիզինգառուի** և Լիզինգատուի միջև պայմանագրային իրավահարաբերությունների նկատմամբ:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագիրը կնքվելուց հետո **Գնորդ-լիզինգատուի և Լիզինգառուի** միջև կնքվում է՝ լիզինգի պայմանների վերաբերյալ պայմանագիր, որով կարգավորվում են լիզինգին վերաբերվող բոլոր պայմանները(ընդ որում դրանք չպետք է տարբերվեն Մասնակցի կողմից ներկայացված և բավարար գնահատված լիզինգի պայմաններից):

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, **Վաճառողը** ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո **Գնորդ-լիզինգատուն** և **Լիզինգառուն** համատեղ որոշմամբ կարող են միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, **Գնորդ-լիզինգատուն** և **Լիզինգառուն** չեն կրում պայմանագրի

---

[21] *Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ:*

միակողմանի լուծման հետևանքով **Վաճառողի** համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով **Գնորդ-լիզինգատուի** և **Լիզինգառուի** կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ **Վաճառողի** առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ **Լիզինգառուի** մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ **Վաճառողի** առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում **Վաճառողի** կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է **Վաճառողը**:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 **Վաճառողի** կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը **Լիզինգառուն** հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: **Վաճառողը**, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը **Լիզինգառուն** այն ուղարկվում է նաև **Վաճառողի** էլեկտրոնային փոստին:

8.12 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.13 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.14 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

## 9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

| ԼԻԶԻՆԳԱՌՈՒ | ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արմենակյան 108/4<br>ՀՎՀՀ 01508793<br><<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1150001612200100<br><br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ>> վարկային կազմակերպություն>> ՓԲԸ<br>Հայաստան, 0078, Երևան Ֆուչիկի փող., 1/1 շենք, տարածքներ 288, 289<br>ՀՎՀՀ 02567702<br>Բանկ «ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ<br>h/h 220009620224000<br>leasing@acba.am<br><br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<Փոլարիս>> ՍՊԸ<br>ք. Երևան, Հ. Քոչար 5/4<br>ՀՎՀՀ 08271777<br>1570099403030100<br><br><<Ամերիաբանկ>> ՓԲԸ<br>gnumner.polarisllc@gmail.com<br>077-53-34-77<br>Շ. Աքբարի Մասիհի<br><br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:*

*Հավելված N 1*
*«27» 11 2025 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-3 ծածկագրով պայմանագրի*

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

*ՀՀ դրամ*

| հհ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման առարկայի անվանումը | մատակարարման | | |
|---|---|---|---|---|---|
| | | | հասցեն | ենթակա քանակը | Ժամկետը |
| 4 | 33121150 | Լիզինգով ԷՍԳ սարքի ձեռքբերում | ք.Երևան, Ա. Արմենակյան 108/4 | 10 լրակազմ | Սույն գնման պայմանագրի և լիզինգի պայմանների մասին պայմանագրի կնքման օրվանից հաշված 90 օրվա ընթացքում: |
| | | Լիզինգի առարկայի գինը | 9 850 000<br>ինը միլիոն ութ հարյուր հիսուն հազար | | |
| | | Լիզինգի սպասարկման գինը | 2 200 000<br>երկու միլիոն երկու հարյուր հազար | | |
| | | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 60 000<br>վաթսուն հազար | | |
| | | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5 000<br>Հինգ հազար | | |
| 5 | 33191480 | Լիզինգով Դեղորայքի ներարկման համակարգի ձեռքբերում՝ իր բաղկացուցիչ մասերով | ք.Երևան, Ա. Արմենակյան 108/4 | 1 հավաքածու | Սույն գնման պայմանագրի և լիզինգի պայմանների մասին պայմանագրի կնքման օրվանից հաշված 90 օրվա ընթացքում: |
| | | Լիզինգի առարկայի գինը | 33 550 000<br>/երեսուներեք միլիոն հինգ հարյուր հիսուն հազար | | |
| | | Լիզինգի սպասարկման գինը | 8 000 000<br>ութ միլիոն | | |
| | | Լիզինգի առարկայի ապահովագրության գինը | 300 000<br>երեք հարյուր հազար | | |
| | | Լիզինգի առարկան սեփականության իրավունքով Պատվիրատուին հանձնելու գինը | 5 000<br>Հինգ հազար | | |

### Չափաբաժին 4

| հ/հ | Չափաբաժնի անվանումը | Առաջարկվող ապրանքի |
|---|---|---|
| | | Լիզինգի առակայի Ապրանքային նշանը, մոդելը և արտադրողը |
| *1* | Լիզինգով ԷՍԳ սարքի ձեռքբերում | OPUS 1. Electrocardiograph 12-channel<br>String Polska SP z o. o. |

### Լիզինգի առակայի և լիզինգի սպասարկման տեխնիկական բնութագրերը*

գործարանային լրակազմ ԷՍԳ սարք որը 12 ալիքային է,
չափսերը 343մմ x 295մմ x 170մմ,
քաշը 3,2կգ.՝ մարտկոցը ներառյալ:

Էկրանը հպումով է , էկրանի չափսը 10,1'' ինչ

Էկրանի ռեզոլուցյան 1028 x 800 պիքսել, ունի հնարավորություն ցուցադրելու տառատեսակային պատկերները վիրտուալ ձևով էկրանի վրա:

Սարքի հիշողությունը 100 000 քննություն, Ունի հնարավորություն տվյալ հիվանդի քննությունը ցուցաբերել, հիվանդի անունի կամ հիվանդի քարտի համարներով որոնման ընթացքում:

Ունի մարտկոցով և հոսանքով աշխատանքի հնարավորություն :

Մարտկոցը աշխատում է 8 ժամ առանց հոսանքի միացնելու ռեժիմում:

Ունի ավտոմատ և մանուալ պրոֆիլ:

Սարքը գրանցում և հայտնաբերում է ամբողջական (Pacemaker) տվյալներ,

Ունի ավտոմատ ծրագրային թարմացվելու հնարավորություն,

Քնի ռեժիմը՝ չոկտագործելու դեպքում կարգավորվում է 0 ից (OFF) մինչև 30 րոպե ժամանակահատվածում:

ԷՍԳ թղթի չափսը 210 մմ A4, ունի երկու տեսակ հնարավորություն՝գլանային և Z-ձև, թղթի արագությունը կարգավորելի է 5; 10; 12,5; 25; 50 և 100մմ /վ:

Ունի տպագրության ռիթմիկ ռեժիմի ընտրելու հնարավորություն,

Սարքը ունի տվյալ ռեժիմների տպելու հնարավորություն ֆորմատներ- 12x1; 6x2; 6x2+1; 3x4; 3x4+1; 3x4+3:

Ունի հնարավորություն ընտրել 12 լարերից որև է մեկի արտածումը և տպել այն:

ԷՍԳ սարքի տվյալները արտածվում է PDF, SCP, CSV, HL7, DICOM, xml հնարավորությամբ,

Սարքը ունի հիվանդանոցի ցանկացած HIS համակարգին միացվելու և սինխրոնացվելու հնարավորություն ՝առանց հավելյալ ծրագրի, լարի և USB բանալիի (Key) միջոցով:

Արտաքին տպիչին միանում է երեք եղանակով Wifi, USB և Lan-ի միջոցով:

Ինտերֆեյսը. արտաքին կոմունիկացիան կատարվում է WI-FI/LAN, Bluetooth, HDMI Full HD, USB 2 հատ:

Սարքի Հզորությունը՝ AC/DC, 115V/230V, 50-60Hz

Սարքի Մկանային դողի ֆիլտրերը՝ 25; 35; 45; 75; 100; 150Հց, ունի անջատման հնարավորություն:

Սարքի հիմնական ֆիլտրերը՝ 0,25; 0.55; 0.85; 1.15; 1,5 Հց, ունի նաև անջատման հնարավորություն:

Ունի A/I ֆիլտրերի ընտրովի մակարդակ:

Սրտի զարկերակի ազդանշանը ցուցադրվում է էկրանի վրա

Սարքը եվրոպական է, ունի CE , MDR, ISO որակի սերտիֆիկատներ:

Սարքը տրամադրվում է 1 տարվա երաշխիքային ժամկետով, սկսած տեղադրման պահից:

Սարքի տեղադրումը, թողարկումը, ԲԿ-ի տեխնիկական մասնագետի ուսուցումը իրականացվում է մատակարարի միջոցներով:

**Լիզինգի պայմանները՝**

-առանց կանխավճարի

-մարման ժամկետը՝ 36 ամիս:

-Առանց պայմանագրի կնքման միանվագ միջնորդավճարի,

- Լիզինգի առարկայի ապահովագրություն լիզինգի ամբողջ ժամանակահատվածի համար 0,2%, որը հաշվարկվում է տարեկան, մնացորդային գումարի նկատմամբ

-Տարեկան տոկոսադրույք՝ 13,3% ՀՀ դրամ, որից 10 տոկոսային միավորը կարող է սուբսիդավորվել ՀՀ կառավարության կողմից համաձայն «Արտադրողականության խթանման նկատակային» ծրագրի

-Մարումները՝ աննուիտետային, ամսական, վաղաժամ մարման դեպքում տույժ/տուգանք կիրառելի չէ

-Լիզինգառուին իրավունք է վերապահվում վաղաժամկետ կատարել վճարումները, որով պայմանավորված վերահաշվարկ է կատարվում վճարման ժամանակացույցում

-Լիզինգի ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը՝ եթե Լիզինգառուն վաղաժամկետ կատարել է բոլոր վճարումները, Լիզինգի առարկան անցնում է Լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարելու և սեփականության իրավունքի փոխանցման գործարքի վճարը վճարելու պայմանով, որի չափը կազմում է 5000 ՀՀ դրամ:

Չափաբաժին 5

| հ/հ | Չափաբաժնի անվանումը | Առաջարկվող ապրանքի Լիզինգի առակայի Ապրանքային նշանը, մոդելը և արտադրողը |
|---|---|---|
| 1 | Լ ի զ ի ն գ ո վ Դ ե ղ ո ր ա յ ք ի ն ե ր ա ր կ մ ա ն հ ա մ ա կ ա ր գ ի ձ ե ռ ք բ ե ր ո ւ մ՝ ի ր բ ա ղ կ ա ց ու ց ի չ մ աս ե ր ո վ | 1. Պ ո մ պ ի կ ա յ ան 15 հ ատ : 10 հ ատ ( **BioFusion DS 100 Pro**) և 5 հ ատ ( **K4 - Four Channel Extension Unit**)<br>2. Շ պր ի ց ա յ ի ն պո մ պ: **BioFusion S 300**<br>3. Ի Ն ֆ ո ւ զ ի ո Ն պո մ պ **BioFusion S 500**<br>4. Շ տատի վ ի ամ ր ակ : **Pole clamp**<br>Guangdong Biolight Meditech Co.,Ltd. (BLT) |

## Լիզինգի առակայի և լիզինգի սպասարկման տեխնիկական բնութագրերը*

### Դեղորայքի ներարկման համակարգ

Համակարգը իր մեջ ներառում է պոմպերի կայաններ, նախատեսված 4 սարքի համար երկարացման հնարավորությամբ, շպրիցային պոմպեր, Ինֆուզիոն պոմպեր, բռնակներ, անհրաժեշտության դեպքում հոսանքի լրացուցիչ ադապտորներ:

Տրամադրվում է 1 տարվա երաշխիքային ժամկետ, սկսած տեղադրման պահից:

Սարքի տեղադրումը, թողարկումը, դեղորայքային բազայի համապատասխանացումը պատվիրատուի պահանջներին, ԲԿ-ի տեխնիկական մասնագետի ուսուցումը իրականացվում է մատակարարի միջոցներով:

1. **Պոմպերի կայան՝ ընդհանուր 15 հատ քանակով.**

Ինֆուզիոն և շպրիցային պոմպերի ներդրման կայան՝ իր բոլոր ակսեսուար և կաբելների հավաքածուով, որից 10 հատը ունի մոնիտոր/էկրան, իսկ 5 հատը առանց մոնիտորով գլխիկի, երկարացման կայան, գլխիկավոր կայաններին միացվելու/համակցելու համար:

Կայանը ունի չորս ինֆուզիոն կամ շպրիցային պոմպերի ներդրման հնարավորություն որը հեշտությամբ ամրացվում է շտատիվին:

Մոնիտորով/էկրանով կայանը ունի ազդանշաններ վիզուալ ձևով ցուցադրելու հնարավորություն:

Կայանը ունի վերալիցքավորվող լիթիումային մարտկոց որը ապահովում է անխափան աշխատանքը 8 ժամ:

30 րոպե աշխատունակության հնարավորություն առաջին թույլ մարտկոցի ազդանշանից հետո:

Ունի ձայնայինն վիզուալ ազդարարման ազդանշան alarm:

Կայանը ունի 3 մակարդակի ազդարարում՝

-բարձր՝ (մարտկոցը վերջացել է / համակարգի սխալ)

-Միջին( CMS անջատված է)

-Ցածր( ցածր/քիչ մարտկոց, մարտկոցի սխալ)

Հոսանքը 100-240 Վ, 50/60 Հց,

Աշխատանքային ջերմաստիճանը +5 C ից մինչև + 40 C աստիճան,

Աշխատանքային օդի ճնշում 57,0 կպա -ից մինչև 107,4 կպա,

Պահեստավորման ջերմաստիճան -20 C ից մինչև + 60 C աստիճան,

Դասակարգում: Ունի Դաս I ունի Տեսակ CF

Ունի CE, ISO 9001, Certificate of Origin

2. **Շպրիցային պոմպ՝ 45 հատ քանակով**

Ներդրվում է և համատեղելի է վերը նշված ներդրման կայանի հետ:

Չափսը 260mm×160mm×75mm:

Համատեղելի է ցանկացած տեսակի շպրիցերի համար և ավտոմատ ապահովում է 1մլ, 2 մլ , 3 մլ ,5մլ, 10մլ, 20մլ, 30մլ, 50մլ, 60մլ շպրիցերի չափի ճանաչումը:

Շպրիցային պոմպը բացի կայանից աշխատում է առանձին իր հոսանքի լարով :

Քաշը 1.8 կգ,

Էկրանի չափսը 3.5 դյույմ,

Էկրանում ցուցադրվում է հիվանդի տվյալներ, դեղորայքի ներմուծման տվյալները, ազդարարման տվյալները ազդանշանի ինֆորմացիան, ինֆուզիայի վիճակը և համակարգի վիճակ:

Հոսքի արագության շեղումը ±2%,

Բոլյուսի ծավալի սխալը՝ չի գերազանցում ±0.05մլ,

KVO սխալը չի գերազանցում ±2%,

Ունի հատուկ առանձնացված համակարգչային ծրագիր որը պարունակում է դեղորայքի գրադարան: Նախատեսված է 500 դեղորայքի տվյալների համար, 30 կատեգորիա և 20 տեսակ դեղերի կոդավորումով անվանումներ:

Տվյալ համակարգչային ծրագրով ներմուծվում է դեղորայքի տարբեր տվյալներ, կատարվում է կարգավորումներ և ունի հնարավորություն ծրագրավորի յուրաքանչյուր շպրիցային պոմպը՝ ցանկացած դեղորայքի անվանումով և դոզայով:

Պաշտպանության աստիճան IP33:

Ունի վերալիցքավորվող լիթումային մարտկոց որը իր հզորությամբ ապահովում է սարքի անխափան աշխատանքը 8 ժամ :

Անջատման ուշացումը(ժամանակը) 30 րոպե՝ որոշակի հաճախականությամբ 25 մլ/ժ դեպքում մարտկոցի ցածր լիցքի առաջին ազդանշանից հետո:

Լարում 100-240 Վ, հաճախականությունը 50/60 Հց:

Աշխատանքային Ջերմաստիճանը +5°C ից +40°C միջակայքով:

Պահեստավորման Ջերմաստիճանային պայմաններ -20°C ից մինչև +60°C

Աշխատանքային օդի ճնշումը 57.0 ից մինչև 107.4 կՊա աշխատանքային ռեժիմում:

Քաշի կարգավորման տիրույթի քայլերը 0.1կգ -ից մինչև 499.0կգ:

Ունի հնարավորություն քաշի միավոր ընտրելու կգ,LB:

Դեղորայքի դոզավորման կարգավորման տիրույթը 0.001 ից մինչև 9999 նշված միավորների համար: mcg/ug, mg, g, mU, U, kU, ml,mEq: Ծավալի կարգավորման տիրույթը 0.10 ից մինչև 9999.99 մլ

Հոսքի արագությունը

- 5ml շպրիցի համար (0.10 ից մինչև 150.0) մլ/ժ
- 10ml շպրիցի համար (0.10 ից մինչև 300.0) մլ/ժ
- 20ml շպրիցի համար (0.10 ից մինչև 500) մլ/ժ
- 30ml շպրիցի համար (0.10 ից մինչև 700) մլ/ժ
- 50ml շպրիցի համար (0.10 ից մինչև 999) մլ/ժ

Հոսքի արագության կարգավորման մակարդակերը/քայլերը

- (0.01ից մինչև99.99) մլ/ժ ավելացման քայլը 0.01մլ/ժ
- (100ից մինչև999.9) մլ/ժ ավելացման քայլը 0.1մլ/ժ
- (1000ից մինչև1800)մլ/ժ ավելացման քայլը 1 մլ/ժ

Բոլյուսի ծավալ արագությունը ավտոմատ և մանուալ դեպքերում

- 5ml շպրիցի համար (0.10 ից մինչև 300.0) մլ/ժ
- 10ml շպրիցիհամար (0.10 ից մինչև 800.0) մլ/ժ
- 20ml շպրիցիհամար (0.10 ից մինչև 1200) մլ/ժ
- 30ml շպրիցիհամար (0.10 ից մինչև 1500) մլ/ժ
- 50ml շպրիցիհամար (0.10 ից մինչև 2350) մլ/ժ

Բոլյուսի ծավալ արագությանկարգավորման մակարդակերը/քայլերը

- (0.01ից մինչև 99.99) մլ/ժ ավելացման քայլը 0.01մլ/ժ
- (100ից մինչև 999.9) մլ/ժ ավելացման քայլը 0.1մլ/ժ
- (1000 ից մինչև 1800) մլ/ժ ավելացման քայլը 1 մլ/ժ

Շպրիցի փակվածության հայտնաբերումը 15 մակարդակ է ընտրելու հնարավորությամբ, ընդ որում առաջին մակարդակը 50 մմ սնդիկի սյուն, վերջին մակարդակը՝ 1125մմ սնդիկի սյուն :

Փակվածության ազդարարման սխալների KVO հոսքի արագությունը 0.10-ից մինչև 5.00մլ/ժ, քայլերի կարգավորումը 0.01 մլ/ժ:

Ժամանակի սահմանման տիրույթը 00:00:00-ից մինչև 99:59:59, կարգավորման քայլերը 1վարկյան:

Ներարկվող դեղորայքի ծավալը 0.10 ից մինչև 9999.99 մլ, կարգավորման քայլերը 0.01 մլ/ժամիսկ կուտակված ծավալը 0-ից մինչև 99999.99մլ:

Շպրիցային Պոմպը ունի երկու տեսակ ազդարարման ազդանշան՝ ձայնային և վիզուալ,ունի նաև երեք տարբեր մակարդակով՝

1.Բարձր.

Խցանում/ Շպրիցրդատարկէ/ ՇպրիցըԱնջատված/ Մխոցային բռնակների սխալ/Երկարացում / Խողովակը անջատված է/ Մարտկոցը սպառված է/ VTBI-ն ավարտված է/ KVO-ի ավարտը/ Համակարգի սխալ/ Շպրից չկա:

2.Միջին.

Խցանմանոտ/

3.Ցածր.

Շպրիցը գրեթե դատարկ է/ VTBI-նզրեթեավարտվածէ/KVO-ն աշխատում է/ Մարտկոց չկա/ Մարտկոցի սխալ/ Ոչ արտաքին սնուցման աղբյուր/ Մարտկոցի ցածր լիցք/ Սպասման ժամանակը սպառված է/ Հիշեցում:

Շպրիցային պոմպը ունի ազդանշանի հիշեցման կարգավորում նաև ձայնային ազդանշանի կարգավորում:

Միացումները Մալուխային են:

Կայանը ունի USB պորտ դեղերի գրադարանի տվյալների ներմուծման հնարավորություն, գրանցված հիշողությունների արտածման հնարավորություն, կալիբրովկա արված տվյալների ներմուծում արտածում:

Ունի Հնարավորություն հետագայում կենտրոնական մոնիտորի կայանին և բժշկական հիվանդի մոնիտորին միանալու:

Ունի Բազմաֆունկցիոնալ ադապտեր: RS232, բժշկական/բուժքույրական կանչի միակցիչ, DC ադապտոր

Դասակարգումը Դաս I, Տեսակ CF է:

Ունի CE ,ISO 9001, Համապատասխանության սերտիֆիկատ:

3. **Ինֆուզիոն պոմպ՝ 15 հատ քանակով**

Ներդրվում է վերը նշված ներդրման կայանի մեջ:

Չափսը 214mm×153mm×75 mm, աշխատանքային դիզայնը հորիզոնական է:

Քաշը 1.6 կգ:

Ինֆուզիոնպոմպը բացի կայանից աշխատում է առանձին իր հոսանքի լարով :

Էկրանի չափսը 3.5" ինչ, հպումային (touchscreen):

Էկրանի վրա ցուցադրվում է հիվանդի տվյալներ, ազդարարման տվյալները, ինֆուզիայի վիճակը և համակարգի վիճակը:

Ունի հատուկ առանձնացված համակարգչային ծրագիր որը պարունակում է դեղորայքի գրադարան: Նախատեսված է 500 դեղորայքի տվյալների համար, 30 կատեգորիա և 20 տեսակ դեղերի կոդավորումով անվանումներ:

Տվյալ համակարգչային ծրագրով ներմուծվում է դեղորայքի տարբեր տվյալներ, կատարվում է կարգավորումներ և ծրագրավորվում է յուրաքանչյուր պոմպը՝ ցանկացած դեղորայքի անվանումով և դոզայով:

Պաշտպանության աստիճան IP33:

Ունի վերալիցքավորվող լիթումային մարտկոց որի հզորությունը ապահովում է սարքի անխափան աշխատանքը առնվազն 8 ժամ:

Անջատման ուշացումը(ժամանակը) 30 րոպե՝ որոշակի հաճախականությամբ 25 մլ/ժ դեպքում մարտկոցի ցածր լիցքի առաջին ազդանշանից հետո:

Ինֆուզյոն պոմպի ճշգրտությունը ±0.5%՝ հոսքի արագության շեղման դեպքում արտադրողի կողմից հավաստագրված համակարգերի համար, և ±5%՝ հոսքի արագության շեղման դեպքում այլ համակարգերի համար:

Լարումը 100-240 Վ, հաճախականությունը 50/60 Հց, աշխատանքային Ջերմաստիճանը +5°Cից մինչև+40°C:

Պահեստավորման Ջերմաստիճանային պայմաններ -20°Cից մինչև +60°C

Աշխատանքային Օդի ճնշում 57.0 ից մինչև 107.4 կՊա աշխատանքային ռեժիմում:

Բոլյուսի ծավալի սխալը՝ ±0.02մլ:

KVO սխալը չի գերազանցում±5%:

Քաշի կարգավորման տիրույթի քայլերը 0.1կգից մինչև 499.0կգ:

Ունի հնարավորություն քաշի միավոր ընտրելու կգ,LB:

Դեղորայքի դոզավորման կարգավորման տիրույթը 0.001 ից մինչև 99999 նշված միավորների համար՝ mcg/ug, mg, g, mU, U, ml,mEq. Ծավալի կարգավորման տիրույթը 0.10 ից մինչև 9999.99 մլ:

Առավելագույն Ինֆուզիոն ճնշումը 1350 մմսնդիկի սյուն:

Հոսքի արագությունը կարգավորվում է 0.10 մլ/ ժ -ից մինչև 2350 մլ/ ժ

Հոսքի արագության աճի կարգավորման քայլերը

- (0.10ից մինչև 99.99) մլ/ժ ավելացման քայլը 0.01մլ/ժ
- (100ից մինչև 999.9) մլ/ժ ավելացման քայլը 0.1մլ/ժ
- (1000ից ավել)մլ/ժ ավելացման քայլը 1 մլ/ժ

KVO հոսքի արագությունը 0.10 ից մինչև 30.00)մլ/ժ, քայլերի կարգավորումը 0.01 մլ/ժ:

Ժամանակի սահմանման տիրույթը 00:00:00 ից մինչև 99:59:59, կարգավորման քայլերը 1 վարկյան:

Ներարկվող դեղորայքի ծավալը 0.10 ից մինչև 9999.99 մլ, կարգավորման քայլերը 0.01 մլ/ժամ իսկ կուտակված ծավալը 0.00 ից մինչև 99999.99մլ:

Ինֆուզյոն պոմպը ունի երկու տեսակ ազդարարման ազդանշան ձայնային և վիզուալ, իր երեք տարբեր մակարդակով.

1. Բարձր.

- օդի հայտնաբերում գծում կամ լայնում/ Կուտակված օդ/ Դատարկ/ Վերնի հոսքի խցանում/ Ներքևի հոսքի խցանում/ Ներարկման խողովակ չկա/ Ներարկման խողովակի սխալ/ Մարտկոց չկա/ VTBI ավարտված է/ KVO ավարտված է/Համակարգի սխալ/

2. Միջին.

-Խցանման մոտ/

3. Ցածր.

- KVO-ն աշխատում է/ Մարտկոց չկա/ Մարտկոցի սխալ/ Չկա արտաքին սնուցման աղբյուր/ Մարտկոցի լիցքը ցածր է/ Սպասման ռեժիմի ժամանակը լրացել է/ Համակարգի ժամանակի սխալ/ Հիշեցում/Ներարկումը գրեթե ավարտված է:

Ունի ազդանշանի հիշեցման կարգավորում, ազդանշանի ձայնային կարգավորում

Միացումները Մալուխային են:

Կայանը ունի USB պորտ դեղերի գրադարանի տվյալների ներմուծման հնարավորություն, գրանցված հիշողությունների արտածման հնարավորություն, կալիբրովկա արված տվյալների ներմուծում արտածում:

Ունի Հնարավություն հետագայում կենտրոնական մոնիտորի կայանին և բժշկական հիվանդի մոնիտորին միանալու:

Ունի Բազմաֆունկցիոնալ ադապտեր: RS232, բժշկական/բուժքույրական կանչի միակցիչ, DC ադապտոր

Դասակարգումը Դաս I, Տեսակը CF է:

Ունի CE , ISO 9001, Համապատասխանության սերտիֆիկատ:

4. **Շտատիվի ամրակ՝ 5 հատ քանակով**

5 հատ ամրակ Շպրիցային և ինֆուզիոն պոմպերի կայանից դուրս (առանձնացված) շտատիվին ամրացնելու համար:

**Լիզինգի պայմանները՝**

-առանց կանխավճարի
-մարման ժամկետը՝ 36 ամիս:
-Առանց պայմանագրի կնքման միանվագ միջնորդավճարի,
- Լիզինգի առարկայի ապահովագրություն լիզինգի ամբողջ ժամանակահատվածի համար 0,2%, որը հաշվարկվում է տարեկան, մնացորդային գումարի նկատմամբ
-Տարեկան տոկոսադրույք՝ 13,3% ՀՀ դրամ, որից 10 տոկոսային միավորը կարող է սուբսիդավորվել ՀՀ կառավարության կողմից համաձայն «Արտադրողականության խթանման նկատակային» ծրագրի
-Մարումները՝ աննուիտետային, ամսական, վաղաժամ մարման դեպքում տույժ/տուգանք կիրառելի չէ
-Լիզինգառուին իրավունք է վերապահվում վաղաժամկետ կատարել վճարումները, որով պայմանավորված վերահաշվարկ է կատարվում վճարման ժամանակացույցում
-Լիզինգի ժամկետը լրանալուց հետո կամ մինչև դրա լրանալը՝ եթե Լիզինգառուն վաղաժամկետ կատարել է բոլոր վճարումները, Լիզինգի առարկան անցնում է Լիզինգառուի սեփականությանը՝ վերջինիս կողմից լիզինգի պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը վճարելու և սեփականության իրավունքի փոխանցման գործարքի վճարը վճարելու պայմանով,

| ԼԻԶԻՆԳԱՌՈՒ | ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արմենակյան 108/4<br>ՀՎՀՀ 01508793<br><<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1150001612200100<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ>> վարկային կազմակերպություն>> ՓԲԸ<br>Հայաստան, 0078, Երևան<br>Ֆուչիկի փող., 1/1 շենք, տարածքներ 288, 289<br>ՀՎՀՀ 02567702<br>Բանկ «ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ<br>h/h 220009620224000<br>leasing@acba.am<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<Փոլարիս>> ՍՊԸ<br>ք. Երևան, Հ. Քոչար 5/4<br>ՀՎՀՀ 08271777<br>1570099403030100<br><<Ամերիաբանկ>> ՓԲԸ<br>gnumner.polarisllc@gmail.com<br>077-53-34-77<br>Շ. Աքբարի Մասիհի<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված N 2*
*«27» 11 2025 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-3 ծածկագրով պայմանագրի*

# ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

| հհ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Գնման առարկայի անվանումը | Լիզինգի դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել. |
|---|---|---|---|
| 4 | 33121150 | Լիզինգով ԷՍԳ սարքի ձեռքբերում | ֆինանսական միջոցների վճարումները կատարվելու են Լիզինգի պայմանագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ հաշվի առնելով լիզինգի պայմանները: |
| 5 | 33191480 | Լիզինգով Դեղորայքի ներարկման համակարգի ձեռքբերում՝ իր բաղկացուցիչ մասերով | ֆինանսական միջոցների վճարումները կատարվելու են Լիզինգի պայմանագրով հաստատվող վճարման ժամանակացույցի համաձայն՝ հաշվի առնելով լիզինգի պայմանները: |

| ԼԻԶԻՆԳԱՌՈՒ | ԳՆՈՐԴ-ԼԻԶԻՆԳԱՏՈՒ | ՎԱՃԱՌՈՂ |
|---|---|---|
| <<Նորք Մարաշ>> բժշկական կենտրոն>> ՓԲԸ<br>ք. Երևան, Արմենակյան 108/4<br>ՀՎՀՀ 01508793<br><<ԱՄԻՕ ԲԱՆԿ>> ՓԲԸ<br>Հ/Հ 1150001612200100<br><br>----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<ԱԿԲԱ ԼԻԶԻՆԳ>> վարկային կազմակերպություն>> ՓԲԸ<br>Հայաստան, 0078, Երևան<br>Ֆուչիկի փող., 1/1 շենք, տարածքներ 288, 289<br>ՀՎՀՀ 02567702<br>Բանկ «ԱԿԲԱ բանկ» ԲԲԸ<br>h/h 220009620224000<br>leasing@acba.am<br><br>----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ | <<Փոլարիս>> ՍՊԸ<br>ք. Երևան, Հ. Քոչար 5/4<br>ՀՎՀՀ 08271777<br>1570099403030100<br><br><<Ամերիաբանկ>> ՓԲԸ<br>gnumner.polarisllc@gmail.com<br>077-53-34-77<br>Շ. Աքբարի Մաշիհի<br>----------------------<br>/ստորագրություն/<br>Կ.Տ. |

*Հավելված N 3*
*«27» 11 2025 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-3 ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ ___________________________
հվհհ _________________________

Լիզինգառու
______________________________
______________________________
գտնվելու վայրը ______________
հհ___________________________
հվհհ_________________________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

*« » « » 20 թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
______________________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «__________________» 20 թ.
Պայմանագրի համարը՝ __________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

| N | Մատակարարված ապրանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ապրանքը ընդունեց
______________________________
ստորագրություն
______________________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված N 3.1*
*«27 » 11 2025 թ. կնքված*
*ՆՄԲԿ-ԲՄԼԱՊՁԲ-25/92-3 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N _______
պայմանագրի արդյունքը Լիզինգառուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _______________-ի (այսուհետ՝ Լիզինգառու) և __________________ __________
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. ___________________________ -ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում **Վաճառողը** 20 թ. ___________________-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

| Ապրանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

Հանձնեց

______________________________
ազգանուն, անուն
______________________________
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________________
ազգանուն, անուն
______________________________
ստորագրություն